

ՀԱՅԵՐԵՆԻ ՍՏԱՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆԵՐԸ

Մ. Պ. ԱՐԱՍՅԱՆ

Սովետահայ քերականագիտությունը իրավամբ գտնում է, որ արգի հայերենի քերականության մեջ չկան ստացական դերանուններ կամ «ստացական ածականներ» իբրև դերանունների մի առանձին խումբ: Աշխարհարարի քերականության մեջ մի ժամանակ իբրև ստացական դերանուն կամ ստացական ածական ճանաչված իմ, եո, մեր, ձեր, իր (յուր) բառերը ոչ այլ ինչ են, եթե ոչ անձնական դերանունների սեռական հոլովածները, որոնք գոյականի հետ գործածվելիս միշտ հատկացուցիչ են և մնում են անփոփոխ: Կրթարար հայերենի քերականության մեջ սակայն դրանք իրավացիորեն դիտվում են իբրև դերանունների ուրույն տեսակ՝ ստացական դերանուններ:

Ստացական դերանունների հարցը բնությունը առնենք նախ Դ. Թրակացու Քերականության հայերեն թարգմանության մեջ և նրա հայ մեկնիչների մոտ¹:

Դեռևս Դիոնիսիոս Թրակացու Քերականության հայերեն թարգմանության մեջ «Յաղագս դերանունութեան» գլխում (ԺԸ) հանդիպում է ստացական դերանուններ տեղիներ: Դրանք հենց արարարի ստացական դերանուններն են, որ կոչվում են նաև ածանցական, իսկ ես, դու, նա, այսինքն անձնական դերանունները՝ նախադասարար: Քերականը չի ասում, թե ի՞նչ հիման վրա ստացական դերանունները կոչվում են «ածանցական»:

«Նախադասարար» և «ածանցական» տեղիները նա գործածել է դեռևս գոյական անունների «տեսակների» մասին խոսելիս. «և տեսակը (անուանց—Մ. Մ.) են երկուք, նախադասարար և ածանցական. եւ է նախադասարար, որ ըստ առաջին զաղարարին կոչեցաւ, հիբար (օրինակ—Մ. Մ.) երկիր և ածանցական, որ յայլմէ զսեռութիւնն ընկալաւ, որպիսի երկրային» (Յաղագս անուան, էջ 13): «Բառք քերականին» բառացանկում (էջ 61) «Նախադասարար» տեղիները բացատրվել է «նախարարական», իսկ «ածանցականը» յայլմէ ածեալ անցուցեալ: Ուստի ենթադրում ենք, որ նույնիսկ այդ ժամանակ նկատվել է, որ ստացական դերանունները ծագում են, կամ Քերականի բառերով՝ «զսեռութիւնն ընկալան» անձնական դերանունների կամ «նախադասարարների» սեռական հոլովածները. մասնավորապես երբ նշված է, որ վերջիններիս սեռական հոլովածներն են իմ, եո և այլն: Ըստ այդմ էլ ստացական դերանունները կոչվել են «ածանցական»²: XIX դարի մեր քերականներն այս տեղիներ վերապահելու են պարզ ստացական դերանուններից —ին մասնիկով կազմված դերանուններին՝ իմոյին, մերսոյին և այլն:

Դ. Թրակացու Քերականության մեջ ստացական (ինչպես և անձնական) դերանունների լրիվ կազմը նշված չէ: Որպես ստացական դերանուն հատկապես հիշատակված են իմ, եո, նուրա՝ եզակի թվի համար. իմէն, եովրա, նովրա՝ թերական կամ երկուորական (երկակի) թվի համար. իմք, եոյք, նուրայք. սեր՝ հոգնակի թվի համար: Դիոնիսիոս Թրակացու «Արուեստ քերականութեան» աշխատության մեջ երկակի թվի համար տրված ունենք արհեստական մոնք, դոնք, նոնք անձնական դերանունները, հետևաբար և ստացական դերանունների համար իմէն, եովրա, նովրա նմանապես արհեստական ձևերը, որոնք խորթ լինելով գրարարին՝ չընդունվեցին, «որովհետև անհասկանալի կամբը արժեք չունի լեզվի մեջ» (Հ. Աճառյան, Լիակ. քերակ., ներածություն, էջ 438):

Թրակացու Քերականության մեջ չկան (-ային) և (-ոյին) վերջավորություն ունեցող ածանցական ստացական դերանուններ, Դրանց փոխարեն ունենք հնարյալները. «Չեւ պարզ, որդոն՝

¹ Ն. Ա. Գոնց, Արուեստ Դիոնիսիոս Գերականի և հայ մեկնիչների նորին, Պետրոգրադ, 1913:

իմ, քո, նորա. բարդ՝ անձին իմոյ, անձին քոյ, անձին նորա՝ Իհարկէ վերջին երեք ձևերը «բարդ» կամ բաղադրյալ (ածանցական) ստացական գերանուններ չեն. դրանց մեջ ունենք «անձն» դոյականի գործածությունը պարզ ստացական գերանունների հետ, երբ այն կիրառվում է անձնական գերանունների փոխարեն:

Դ. Թրակացու Քերականության թարգմանության մեջ ստացական գերանունները կոչվում են նաև «երկդիմիք», սակայն ի՞նչ նկատառումով՝ այդ չի ասված: Քերականության մեկնիչներից Դավիթ փիլիսոփան մեկնաբանելով այս տերմինը գրում է.

«...կամեցաւ դովաւ և գերկդիմի բնութիւն ածանցիցդ ցուցանել, աւրինակ իմն էթլ ասիցես, իմոյ այգւոյ բերր, թե այլ ինչ նոյնպիսի. միով ձայնիւ գինքն և գստացուածան գեկուցանել»:

Մեր կարծիքով, ստացական գերանունները «երկդիմի» են կոչվել ոչ այն պատճառով, որ նրանք են, թե խոսողին են պատկանում և՛ այգին, և՛ նրանից ստացվող բերքը, որոնք միասին կազմում են խոսողի ստացվածքը. «գստացուածան», այլ նրա համար, որ նրանք իրենց ծագմամբ անձնական գերանունների սեռականի ձևերը լինելով՝ թե ստացվածքի տիրոջ քերականական դեմքն են նշում՝ ես, դու, նա և այլն, այսինքն՝ «գինքն», և թե՛ բուն ունեցվածքի (որ միշտ երրորդ դեմքի է) պատկանելությունը, որի համար էլ արդեն նրանք կոչվում են ստացական գերանուններ: Ընդ որում չէր լինի կարծել, որ ստացական գերանունների «երկդիմի բնույթը» նշանակում է, որ խոսողին են պատկանում թե՛ այգիս, թե՛ բերքը: «Եմոյ այգւոյ բերր» պատեհառիթ օրինակը թույլ է տալիս ասելու, որ խոսողին են պատկանում անշուշտ թե՛ այգին, թե՛ նրա բերքը, ու իբրև այդ պատճառով իմ ստացական գերանունը «երկդիմի» է: Սակայն նույնը կարելի է պնդել հետևյալ և նման «անպատեհ» օրինակի դեպքում.

«Ձայն եղբորորդոյ իմոյ բախլ ի դրանն» (Նբգ Երգոց, Ե, 21), իր եղբորորդու համար խոսողը կարող է ասել իմ («Եղբորորդոյ իմոյ»), բայց նույնը՝ իմ կարող է ասել նաև իր եղբորորդու ձայնի համար: Իհարկէ՝ ոչ: Կարելի էր բերել այլ «կոպիտ» օրինակներ, որոնցից, եթե ընդունենք ստացական գերանունների երկդիմի բնույթի այդ բացատրությունը, կստացվեն անցանկալի հետևանքներ...

Դավիթ փիլիսոփան այս մի արժեքավոր դիտողությունից բացի (ստացական գերանունների երկդիմի բնույթի մասին) ստացական գերանունների վերաբերյալ նոր ոչինչ չի ավելացնում Դ. Թրակացու Քերականությանը:

Անանուն մեկնիչը մի կողմ է թողնում անձնական, հետևապես և ստացական գերանունների երկակի լվի համար Դ. Թրակացու Քերականության հայ թարգմանչի հնարած արհեստական ձևերը՝ իմլն, Բովրա, նովրա, և դրանց փոխարեն առաջարկում է ասել «իմն և Բոյն, սորայն և դորայն, նորայն և նորայն», իսկ սրանց հոգնակի լվի համար՝ «մերն և ձերն և նոցայն»³, որոնք սովորական են դարձել համար՝ տարբեր դեմքի կամ բազմադիմի ստացական գերանուններով արտահայտված բազմակի հատկացուցիչներ ունեցող հատկացյալ: Գր. Քարինը և մեր շատ կան ի թափել զատամունս նորա ի տալն, և ձեր ի բերել (Փ. Բուզանդ, 1913, էջ 163): «Ձատամունս» գոյականը նորա և ձեր բազմակի հատկացուցիչների հատկացյալն է: Թր. Մխիթարակից լինել ձեզ վասն ընդ միմեանս իմոյ և ձերդ հաւատոց (Հռովմ., Ա, 12)⁴ Ձեզ մխիթարակից լինեմ իմ ու ձեր փոխադարձ հավատքի միջոցով:

Անանուն մեկնիչը այլ ստացական գերանուններով լրացնում է նախկինների կազմը. իմ, Բո, սորա, մեր գերանուններից բացի նա թվարկում է՝ ի սորայոյն, ի դորայոյն, ի ձերոյն, և սոցայոյն, ի դոցայոյն, ի նոցայոյն՝ իբր «յուլվիցն» (հոգնակի), առանց նշելու, որ այս ձևերը սորա, դորա, ձեր, սոցա, դոցա, նոցա գերանունների եզակի և հոգնակի բացառականի հոլովածներ են: Սակայն դրանցից կարելի է եզրակացնել, որ րոտ Անանուն մեկնիչի, նրանց ուղիղ կամ ուղղական ձևերը ես՝ սորա, դորա սոցա, դոցա, նոցա և ձեր ստացական գերանուններ են: Սրանք չեն հիշատակված Դ. Թրակացու մոտ:

Նախորդ մեկնիչների համեմատությամբ Մովսես Քերթոզն ամենևին նորություն չի ավելացնում ստացական գերանունների հարցում:

Մտեփանոս Սյունեցին գերանունն իբրև խոսքի մաս սահմանելուց հետո գերանուն համարվող բառերը թվարկելիս նշում է նաև իմ, Բո, սորա, դորա, նորա, մեր, ձեր, սոցա, դոցա, նոցա

³ Ե. Արդունց, Նշվ. աշխ., էջ 29:

⁴ Նույն տեղում, էջ 117:

Նույն տեղում, էջ 151:

մարմին իցի՝ այն, թէ հանդերձ, և թէ գործը և այլն»¹։ Այն դերանունը ստացական է, որ յուրաքանչյուր դեմքին, ունեցածը կնշանակե՞2։

Նրանք միահամուռ դռնում են, որ ստացական դերանուններն իրենց ծագումով անձնական և ցուցական դերանունների սեռական (եզակի և հոգն.) հոլովաձևերն են, որ իբրև ուղղական պիտված դարձյալ են հոլովվում։ Այդ առթիվ Մ. Չամչյանցը գրում է. «...այսոքիկ դերանունը (իմ, քոյ, մեր, ձեր, իւր—Մ. Մ.) կազմին ի սեռականաց կական դերանունացս... Բազում անգամ նաև սեռական հոլովը ցուցական դերանունացս, սա, դա, նա, յաւելմամբ չ տառին իբրև ստացական վարին»³։

Գ. Ավետիսյանը նույնպես գրում է. «Ստացական դերանվանք կրճեանան կական (անձնական—Մ. Մ.) և ցուցական դերանվանք, անոնց եզակի և հոգնակի սեռականը՝ կրկա ուղղականը ստացականին, ու նորեն կհոլովի»⁴։

Ընդունելով այդ հիմունքը՝ այս խմբի բոլոր բերականները նշում են, որ գրաբարի պարզ ստացական դերանունների կազմը հետևյալն է՝

իմ, քո (քոյ), իւր, մեր, ձեր, իւրեանց, սորա, սոցա, դորա, դոցա, նորա, նոցա։

Եթե բացառենք իւր և իւրեանց բառերը, աչա կարելի է ասել, որ սա, դա, նա դերանունների սեռական հոլովաձևերը ստացական դերանուն համարելը գալիս է Գ. Թրակացու Քերականությունից և նրա հաջ մեկնիչներից։

Պետք է ասել, որ սորա, դորա, նորա, սոցա, դոցա, նոցա սեռականների գործածությունը իբրև ստացական դերանուն համարված չէ, մանավանդ հինգերորդ դարում։ Ավելի շատ վկայություններ գտնում ենք հետագա դարերում։ Ահա նշե՛-ի վկայությունները՝ տրված սորայ, սոցայ, սորայ, նոցայ բառաձևերում, սորայ, սոցայ, նորայ, նոցայ բառերը, որպես ստացական դերանուններ, համաձայնել են իրենց հատկացյալին.

1. Հոտ սորայումն փառաւորեցաւ բանիւ։
 2. Ի սոցայցն զնոսա աստուածոց զարդարեալ պայծառացոյց։
 3. Առարինեացն և խաղաղասիրացն, և սոցայցն հակառակի անխնայ տարրոգացն չար։
 4. Շնորհեան և դողութեան, և համաձայն սոցայցն (կամ սայց) ասացեալ շարեաց։
 5. Ի նորայիցն ճաճանչից։
 6. Հոտ իւրոյն բնութեան անհաղորդ է նորայոցն ախտից։
 7. Եւ ոչ միայն հայոց, այլ բազմաց այլոց թագաւորաց լինէր մահաբեր, զի նոցայոցս տիրեսցէ իշխանութեանց (Խոր., II, ԻԳ, 5)։
 8. Սոցայցն բաշխմանց պարգութիւն առ իւրեանց տարրերութիւնս բազմացուցանեն։
 9. Պարծիմբ ազգակցօրն, նոցայովնս բերկրիմբ արամբբ։
 10. Հետ նոցայցն ազգաց սկիզբն։
 11. Յաղազս նոցայցն յաճախ յաջողութեանց։
 12. Չեռնտո, նոցայցն լինելով խաղաղութեան գելից և բաղարաց։
 13. Տօնակից լինիմբ սոցայցն փոխատրելով ուրախական կրից։
 14. Իմանալ տիրապէս վնոցայցն (կամ զնոցացն) իմանալի բնութեանց կարգաւորութիւնս։
- Ուստի սա, դա, նա դերանունների սեռականից բխած ձևերը՝ սորա, դորա, նորա, սոցա, դոցա, նոցա երբեմն հանդես են գալիս որպես ստացական դերանուն, ենթարկվելով Ո հոլովման։
- Արտեն Բաղրատունու մոտ օրինակները նույնն են, ինչ նշե՛-ի վկայությունները, բացառությամբ հետևյալների. «Բորաւովի ախտից տեսութեամբ, նոցայցն առաջին արկելոցն գործոց»⁵ (Խոր., էջ 77, 17)։ Նա այս ստացական դերանունները տարբերում է իբրև սովորական հատկացուցիչ հանդես եկած սա, դա, սա դերանունների սեռականներից. վկայությունները մեջ բերելուց հետո նա ավելացնում է. «Այլ են սեռականը գոյական դերանունացս սա, դա»։

¹ Մ. Չամչյանց. Քերականութիւն հայկազեան լ' գուրի, Տփլիս, 18-6, էջ 198։ Չմտանանք, որ այս աշխատությունն առաջին անգամ լույս է տեսել 1779 թ., ուստի և Մ. Չամչյանցին սլաւոնականորեն ենք գնում XIX դարի բերականների շարքում։

² Գ. Ավետիսյան, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1813, էջ 48։

³ Մ. Չամչյանց. նշվ. աշխ., էջ 198։

⁴ Գ. Ավետիսյան, Քերականութիւն հայկական, էջ 43-49։

⁵ Ա. Բաղրատունու, Քերականութիւն ի պէսս գարգացելոց, Վենետիկ, 1837, էջ 361, № 833։

նա, որ յաճախ վարին յատկացուցիչը առ ամենայն հոլովիւր նախադասք և յետադասք¹, այսինքն՝ տառնց համաձայնելու իրենց հատկացյալին:

Մ. Արեղյանը իր «Գրարարի համառոտ քերականութիւն» աշխատության մեջ գրում է, որ նուրա, սոցա և այլն ճերբեմն ածական էլ են բանում. օր. Զի նոցայոցն տիրեսցէ իշխանութեանց, ծանօթութիւն նոցայոցն առաջի արկելոց գործոց²: Իր մի այլ աշխատության մեջ (Աշխարհաբարի հոլովները, էջ 32) նա այս միտքը կրկնելով հանդերձ գտնում է, որ այդ հոլովաձեւերի իբրեւ ստացական գերանուն գործածութիւնը ընդհանուր չի եղել:

«Երբարում սորա, դորա, նորա և հոգնակին սոցա, դոցա, նոցա իբրեւ անվան լրացում սովորաբար անփոփոխ են մնում՝ հայր նորա, հօր նորա, ի հօրէ նորա. բայց պատահում են այդ բառերի համար և ածականաբար գործածութիւններ՝ Զի նոցայոցն տիրեսցէ իշխանութեանց, որից երևում է, թէ այդ ցուցականների սեռականներն ևս ըմբռնվել են իբրեւ ստացական ածական: Սակայն քանի որ այս վերջին տեսակի գործածութիւնը հազվադեպ է երևում, պետք է ընդունել, որ հին ժամանակներում մեր լեզվի մեջ զրանց իբրեւ ստացական ածական գործածութիւնն ընդհանուր չի եղել. մի բարբառի մեջ եթէ հաճախված է եղել, ուրիշների մեջ չի եղել, այնինչ իմ, քո, իւր, մեր, ձեր ընդհանրապէս ստացական ածական են եղել» (էջ 32):

Հ. Աճառյանն աւելի խիստ արտահայտվելով՝ բոլորովին մերժում է սորա, դորա, նորա, սոցա, դոցա, սոցա, այդ թվում և իւրեանց հոլովաձեւերի իբրեւ ստացական գերանուն գործածութիւնը: Նա գրում է. «Ուստի ստացական ածականների շարքն են դնում նաև իւրեանց, նորա և նոցա (ուստի և սորա, նոցա, դորա և դոցա—Մ. Մ.) բառերը: Գրաբարի համար սա ճիշտ չէ³: Նա այսպէս է պատճառաբանում. «Իւրեանց, նորա և նոցա (ավելացնենք նաև սորա—սոցա, դորա—դոցա—Մ. Մ.) թեև իւրեանց, նա և նոցա (սա և սորա, դա և դորա—Մ. Մ.) բառերի սեռականներն են, բայց սրանք անձնական գերանուն չեն բնապէս, այլ անդրադարձ և ցուցական, ուստի չեն կարող տալ ստացական: Այդ բառերը սեռական հոլովով հատկացուցիչ են միայն: Ստացական լինելու համար պետք է հոլովվեն. մինչդեռ մնում են միշտ անփոփոխ՝ ինչ հոլովով էլ որ լինի հարակից գոյականը»⁴. և նա բերում է օրինակներ, որ կարելի էր տասնապատկել:

Վերջ բերված վկայութիւնները սակայն ցույց տվեցին, որ սորա... նոցա և նմանները միշտ անփոփոխ չեն մնում, այլ երբեմն համաձայնում են հարակից գոյականին: Հարկ ենք համարում նշել և հետևյալը:

Ըստ Հ. Աճառյանի, ստացական գերանուն չի կարելի համարել իւրեանց բառը այն պատճառով, որ այն թեև իւրեանց բառի սեռականն է, բայց «բնապէս» անձնական գերանուն չէ. այլ անդրադարձ: Ժամանակակից հայ քերականագիտության պահանջներից ելնելով՝ մենք չենք կարող իւրեանց կամ իւրեանց բառը անդրադարձ գերանուն համարել գրաբարում. այդ բառն անձնական գերանուն է, ուղղական և հայցական հոլովներից զուրկ իւր անձնական գերանվան հոգնակին: Ուստի իւրեանց—ը և (ինչպէս իւր բառը) իբրեւ անձնական գերանվան սեռական կարող էր ստացական գերանուն դառնալ. եթէ իբրեւ հատկացուցիչ գործածվելիս համաձայնելու իր հատկացյալին: Սակայն քանի որ այդ տեղի չի ունենում, ուստի իւրեանց հոլովաձեւը ստացական գերանուն չէ, այլ գերանվամբ արտահայտված հատկացուցիչ:

Մեջբերման մեջ ասված է նաև, որ նա (նոցա) գերանունից ստացական գերանուն չի կարող ծագել, որովհետեւ «բնապէս» այն ոչ թէ անձնական, այլ ցուցական գերանուն է: Մենք կարծում ենք, որ այս դրույթը վիճելի է:

Գերանունների կազմը որոշելիս Հ. Աճառյանը հաճախ հիմք է ընդունում հնդեվրոպական մայր կամ հիմք լեզուն: Անշուշտ այն նկատի ունենալով՝ նա գրում է, որ նա գերանունը «բնապէս» անձնական գերանուն չէ, բայց գործ է ածվում իբրեւ երրորդ դեմքի անձնական գերանուն. «Երրորդ դեմքի համար գործածվում է նա ցուցականը, ճիշտ ինչպէս հնդեվրոպականում»⁵: Ուստի եթէ նա բառը գերանուն է կամ որպէս այդպիսին է գործածվում, ապա ըստ ստացական գերանունների ծագման՝ նորա սեռականը ստացական գերանուն է, եթէ թվով և

¹ Ա. Բ ա գ ր ա տ ու ն ի, նշվ. աշխ., էջ 362:

² Մ. Արեղյան, Գրարարի համառոտ քերականութիւն, 1907, էջ 93:

³ Հ. Աճառյան, Հայոց լեզվի լիակ. քերակ., հ. 2, էջ 286:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, էջ 33:

Հոլովով համաձայնել է հարակից գոյականին՝ «Բնապես» անձնական գերանուն չհանդիսացող նաև և բնդհանրապես երրորդ դեմքի անձնական գերանունների մասին Մ. Ա. Բուդագովը գրում է. «Երրորդ դեմքում՝ ОН-ЕГО, (դերմանեւեն ըհ-ի՛ն, հոտնսերեն իլ-ե, անդիւս-րեն he-his) անձնական և ցուցական գերանունները կարծեր միահյուսվում են։ Եվ այս կապը մինչև այժմ զգացվում է. երբ մենք ստում ենք ОН (նա), մենք ոչ միայն անձնական գերանուն ենք արտահայտում, այլև կարծեր միաժամանակ ցույց ենք տալիս — ТОТ (սա, դա, նա)։ Երրորդ դեմքում անձնական և ցուցական գերանունները արված են օրգանական միասնության մեջ»¹։ Թե՛ զրարարի, թե՛ արդի հայերենի բերականություն մեջ նա բարձր միաժամանակ է՝ երրորդ դեմքի անձնական գերանուն է, և՛ ցուցական գերանուն։

Հոլովման ենթակա չլինելու հիման վրա սորա... նոցա և այլն ու իւրեանց հոլովածները ստացական գերանուն չհամարելու հարցում Հ. Աճառյանի մոտ նկատվում է անհետևողականություն։ Ժամանակակից հայ լեզվաբանությունը գտնում է, ի տարբերություն Հ. Աճառյանի, որ արդի գրական լեզուն և բարբառները ստացական գերանուններ և «ստացական ածականներ» չունեն։ «Հայոց լեզվի լիակատար բերականություն» երկրորդ հատրի՝ «Ստացական բարբառներում» ենթադրի բնթերցումը մեզ բերում է այն համոզման, որ ցուցական գերանունների սեռական հոլովածները (սրա... նրանց և այլն) բարբառներում ստացական ածականներ են (իհարկե ձևափոխված՝ համաձայն ամեն մի բարբառի արտասանական համակարգի)։ Օրինակ, նոր-չուզայի բարբառի «ստացական ածականներն են ոչ միայն անձնական, այլև ցուցական գերանունների սեռական ձևերը» (էջ 290)։ Այս դրույթը սակայն հակասում է հեղինակի իսկ այն երկու սկզբունքներին, որոնց համաձայն զրարարում սա, դա, նա ցուցականներից ստացական գերանուններ կամ «ստացական ածականներ» չեն ստացանում, որովհետև նախ՝ զրանք ցուցական գերանուն են, երկրորդ՝ հարակից գոյականի հետ չի հոլովվում նրանց սեռականը (սզրա, դուրա, նորա)։ Արդ, թե՛ գրական լեզվում և թե՛ բարբառներում զրանք մնում են ցուցականներ, և նրանց սեռական հոլովածները (սրա, դրա, նրա) ոչ գրական հայերենում են հոլովվում հարակից գոյականին գույրնթաց, ոչ էլ բարբառներում։ Ժիշտ մտանցումն այն է, որ արդի գրական հայերենն ու նրա բարբառները (մեծ մասամբ) չունեն ստացական գերանուններ։

Մի այլ փաստ. թեպետ Հ. Աճառյանը իւրեանց հոլովածներ մերժում է իբրև զրարարյան ստացական գերանուն, սակայն «Հայոց լեզվի լիակատար բերականություն» երկրորդ հատրում (էջ 335) գրում է. «Բարբառներն բնդհանրապես զրարարի ստացական գերանուններն անփոփոխ պահում են», ու այդ նույն էջում վերջիններից նշվում են իւր, իւրեանց, «Սրանք բարբառներից շատերի մեջ դարձել են իւր, իւրեանց»։ 338-րդ էջում իւրեանց-ը նշվում է նաև որպես աշխարհարարի ստացական ածական։ Չէ՛ որ իւրեանց բառակեր զրարարում ստացական գերանուն չէր։

Սորա, դուրա, նորա, սոցա, դոցա, նոցա հոլովածները ստացական գերանունների կազմում սեղ չեն գտել Վ. Առաքելյանի, Ս. Նազարյանի՝ զրարարին նվիրված աշխատություններում։ Ա. Ա. Արարամյանը իր «Գրարարի ձևանարկ» աշխատության մեջ (1958) ճիշտ կերպով և մեզ ուղեցույց հանդիսանալով գրում է, որ «զրարարի ստացական գերանուններն են՝ իմ, Բո կամ Բոյ, իւր, մեւ, անք» (էջ 94), իսկ «Ստացական գերանունների իմաստով երբեմն զործածվում են նաև սա, դա, նա գերանունների սեռական հոլովածներից բխող սորա, նորա, դուրա, սոցա, դոցա, նոցա ձևերը» (էջ 95)։ Այս «երբեմն» բառի տակ պետք է հասկանալ (ինչպես հեղինակը բարձրացակամորեն մեզ բանավոր հաղորդեց), այն դեպքերը, երբ այդ բառակերը իրենց հոլովով ու թվով համաձայնել են իրենց հատկացյալ հարակից գոյականի հետ, ինչ որ մեկուսյան դարաշրջանին հաջորդող ուշ ժամանակաշրջաններում է պատահում հատկապես։

Թեևս հին բերականներն իբրև ստացական գերանուն բնդունում են նաև իւրեանց ու սա, դա, նա գերանունների սեռական հոլովածները, սակայն պետք է ասել, որ իբրև զրարարի ստացական գերանուններ նրանք առաջին հերթին նշում են իմ, Բո, իւր, մեւ, անք բառերը, զրանք անվանելով թրուն ստացական գերանունք» (Գ. Ավետիսյան, Քերականութիւն հայկական, էջ 429)։

Նրանք մեծ մասամբ խոստովում են իւրեանց հոլովածներ ստացական գերանունների շարքում ուղղակի հիշատակելուց։ Ավելի հաճախ այն գտնում ենք (-ին) վերջածանցով պարզ ստացական գերանուններից կազմված ածանցյալ ստացական գերանունների թվում՝ իւրեանց-

¹ Г. А. Будогов, Очерки по языкознанию, Москва, 1953, էջ 187։

ցային (անս Միք. Չամչանցի մոտ, էջ 50, Ա. Բագրատունի, էջ 91), Պրոֆ. Մ. Արեղյանը այն ներկայացնում է որպես գոյականաբար գործածվող «գերանվան սեռական» (Գրաբարի համառոտ քերականություն, էջ 159): Իսկ Ա. Այտրեյանը գրում է. «Իւր եզականի ստացական է, այսինքն մեկ հոլովոյն ունեցածը կը ցուցնէ, իսկ հոգնակի ստացական՝ այսինքն՝ շատերուն ունեցածը նշանակելու համար կը գործածվի իւրեանց... և միշտ անփոփոխ կը մնա, ինչպէս նաև նորա, սոցա»¹: Իսկ վերջիններս՝ սորա, դորա, նորա, սոցա, դոցա, նոցա Ա. Այտրեյանն անվանում է «տեսակ մը ստացականներ»։ «Աս. դա, նա ցուցական գերանուններուն ածականներն տեսակ մը ստացականներ կըլին որ կը հոլովին եզ. և հոգն. և նախդիր ու հոգ կառնուն»²:

Սորա, դորա, նորա, սոցա, դոցա, նոցա «ստացական գերանունների» ուղիղ ձևերը Միք. Չամչանցի և Գ. Ավետիսյանի քերականություններում արված են վերջում յ տառով՝ նորայ... նոցայ և այլն (սա, դա, նա ցուցական գերանունների հոլովման տախտակում այդ բառաձևերը առանց յ տառի են)։ Գ. Ավետիսյանը գրում է. «Սա, աւռ. սորա, սոցա, կըլլա ստացական սորայ, նա՝ նորայ... դա՝ ...դորայ (էջ 48)։ Սակայն, էջ 50-ում, երբ նա տալիս է «ցուցականներն ելած» ստացական գերանունների հոլովման պատկերը, կարգում ենք սորա-սոցա, դորա-դոցա, նորա-նոցա, այսինքն՝ առանց յ տառի։ Միք. Չամչանցի մոտ ստացական բերանվան հոլովման աղյուսակում սրանց ուղղականը ունի յ ձայնորդը (էջ 49)։ Այդ նրա համար է. որպեսզի նորայ, նոցայ և այլն բառերն իրեն ստացական գերանուն գործածվելիս տարբերվեն սա, դա, նա գերանունների սեռական սովորական հոլովաձևերից (սորա, սոցա և այլն)։ ՆշՔ-ը սորայ, սոցայ, նորայ, նոցայ ստացական գերանունները բացատրում է առանձին բառահոլովածներում։ Նրանց բառավերջի (յ) ձայնորդը հատկապես հանդես է գալիս բառի սեման ժամանակ՝ հոգ ստանալիս կամ հոլովվելիս։

Գրաբարի ստացական գերանունների ծագման կամ կազմավորման հարցը ճիշտ և միակերպ է լուծվել բոլոր ժամանակների մեր քերականների կողմից։

Արդի գրական հայերենում իմ. Ըռ. Իր (գրաբ. իւր), մեր. օնւր բառաձևերը մի ժամանակ կոչվում էին «ստացական գերանուն», իսկ այժմ իրավամբ համարվում են պարզապես անձնական գերանունների սեռական հոլովաձևեր։ Բայց տեսանք, որ նրանք հենց գրաբարի ստացական գերանուններն են։ Ուստի գրաբարի ստացական գերանուններն իրենց ծագմամբ անձնական գերանունների սեռական հոլովաձևերն են։ Սակայն լեզվի պատմական պրոցեսը այդ կետում կանգ չի առել։ Սեռականի այդ հոլովաձևերը մյուս գերանունների և գոյականների սեռականի համեմատ ձևեր են բերել մի յուրահատկություն։ Ծագած լինելով անձնական գերանունների սեռականից՝ ստացական գերանունները դիտվել են իրեն ուղղական կամ ուղիղ սկզբնաձևեր ու ենթարկվել կրկին հոլովման, այն էլ ոչ միայն առանձին կամ անկախ, իբրև փոխանուն, այլև գոյականների հետ իրեն հատկացուցիչ կիրառվելիս։ Դա հիմք է տվել քերականներին դրանք համարելու առանձին բառ, գերանվան առանձին տեսակ։

Նշվեց, որ Գ. Թրակացու Քերականության և նրա մեկնիչների մոտ ուղղակի կերպով և մեկին չի առված, որ գրաբարի ստացական գերանունները ծագում են անձնական գերանունների սեռական հոլովաձևերից։ Մենք ենթադրեցինք, որ ստացական գերանունները «ածանցական» կոչելիս նրանք հիմք են ընդունել այս պրոցեսը։ Ստացական գերանունների ծագումը լուսաբանելիս՝ անձնական գերանուններին նրանք անշուշտ կավելացնեն նաև ցուցականները, ինչպես գրել են XIX դարի քերականները։ «Ստացական գերանվանը կը ձևանան լական (անձնական—Ս. Մ.) և ցուցական գերանվանցն, անոնց եզակի և հոգնակի սեռականը՝ կըլլա ուղղականը ստացականին, ու նորեն կը հոլովի»³։ Համենայն դեպս ստացական գերանունների ծագման բացատրությունը մնում է ճիշտ. րանի որ նրանք սա, դա, նա ցուցական գերանունների սեռական հոլովաձևերը (սորա, դորա... նոցա) համարում են ստացական գերանուն, ուստի պետք է ասեն, որ «ստացական գերանվանը կը ձևանան լական և ցուցական գերանվանցն»։ Սակայն գրաբարի բուն ստացական գերանունները ծագում են ես, դու, մեք, դուք և եզակի ուղ. ու հայց. հոլով չունեցող իւր անձնական գերանունների սեռական հոլովաձևից, իսկ սորա

¹ Գ. Չամչանցի, Քերականություն հայկազնեան լեզուի, աշխատասիրեալ ի Հ. Արսէնէ Այտրեյան, Վիեննա, 1883, էջ 51:

² Նույն տեղում:

³ Գ. Ավետիսյան, Քերականություն հայկական, էջ 48—49:

դուրա, նուրա, սոցա, նոցա հոլովածներից երբեմն միայն առաջանում են ստացական գերանուններ:

Իւր ստացական գերանվան ծագման մասին Հ. Աճառյանը գրում է հետևյալը. «Իւր համարվում է ինքն բառի սեռականը¹: եվ հեղինակը այս գրում է «Ստացական հին հայերենում» (գրաբար հայերենում — Մ. Մ.) ենթավերնագրի տակ: Աշխարհարարում ինքն գերանունը գիտակցվում է որպես երկամ յուր գերանվան ուղղականը², սակայն գրաբարի գերանունների սխառնումում ինքն և իւր տարբեր անձնական գերանուններ են և ունեն տարբեր հոլովում: Ըստ այնմ, ինքն անձնական գերանվան սեռականն է ինքնան, որ երբեմն, ինչպես կոնստանտ, գոյականի հետ իրեն հատկացուցիչ գործածվելիս³ արտահայտում է իւր ստացական գերանվան իմաստը: Իսկ իւր ստացական գերանունը, որ այս դեպքում Մ. Չամչյանցը միշտ տալիս է իւր-իւրոյ ձևով, այսինքն՝ նրա սեռականի նշումով, որպեսզի իւր ստացականը չշփոթվի Լգակի ուղղական և հայցական հոլովածն շունեցող իւր անձնական գերանվան հետ, ծագում է հենց այս վերջինից, և ոչ թե ինքն գերանվան սեռականից: Աշխարհարարում է կամ միջին հայերենում, որ իւր բառը գիտակցվում է ինքն գերանվան սեռականը: Միջին հայերենում երրորդ դեմքի անձնական գերանունն էր ինք բառը՝ ինք, իրեն, կամ իւ... իրենց³... և այլն:

Երկու խոսք իւր ստացական գերանվան փոխարեն երբեմն գործածվող ինքնան հոլովածն է մասին:

Իւր ստացական գերանվան փոխարեն երբեմն գործածվում է ինքն գերանվան Լգակի սեռական հոլովածը՝ ինքնան (երբեմն միայն՝ ինքնան): Ինքն անձնական գերանունը իր անկախ կիրառությամբ սովորաբար երրորդ դեմքի անձնական գերանուն է⁴, ուստի նրա սեռականը, իրեն հատկացուցիչ, ցույց է տալիս երրորդ դեմքի պատկանելությունը: Սակայն վերջինս կարող է նշվել երրորդ դեմքի մի քանի գերանուններով՝ իւր ստացական գերանվամբ, նուրա, նուրին, սոցա, դուրա սեռականներով: Ուստի ինքնան սեռականով արտահայտված հատկացուցիչը նրանցից որ մեկին է փոխարինում՝ իւր ստացական գերանվանը, թե մյուսներին, որ կարող ենք միավորել մի խմբի մեջ: Այս օրոքը կարևոր է նրանով, որ իւր ստացական գերանունը և նուրա սեռականի խումբը իրենց իմաստով, մանավանդ կիրառությամբ տարբերվում են իրարից:

Հայտնի է, որ գրաբարում իւր ստացական գերանունը (իւր-իւրոյ) ծագում է իւր անձնական գերանունից, որ չունի Լգակի թվի ուղղական և հայցական հոլովներ: Իւր անձնական գերանունը գործածվում է ինքն անձնական գերանվան նշանակությամբ, և ոչ թե նա, նույն և այլն:

Ինքն անձնական գերանունն իր հերթին լրացնում է իւր անձնական գերանունը՝ գործածվելով նրա պակասող հոլովների փոխարեն: Ուստի բնական է, որ ինքն գերանվան սեռականը (ինքնան), իրեն հատկացուցիչ գործածվելիս, արտահայտի իւր ստացական գերանվան իմաստը, և ոչ թե նուրա կամ նուրին, սոցա, դուրա սեռականների:

Ահա օրինակներ, որտեղ ինքնան սեռականը գործածվել է իւր ստացական գերանվան փոխարեն.

1. Եւ գրեկալեալ պարզեսն յԱստուծոյ՝ ինքնան ձևով փոխ անդրին նմին մատուցանէր (Եղիշէ, 1957, էջ 107. 4)՝ Աստուծոյ ստացած պարգևները իւր իսկ ձևով դարձյալ նրան էր մատուցում:

Իրեն հատկացուցիչ գործածված ինքնան բառը պետք է թարգմանել իւր բառով, քանի որ նրա հատկացյալը (ձևով) պատկանում է գործողությանը կատարող օբյեկտին: Նախորդների է թարգմանել «իւր իսկ»: Սեր Մատենադարանի № 4809 (1003) ձեռագիրը (1310) ունի ինքնան, փոխանակ ինքնան ամենատարածված ձևի:

¹ Հ. Աճառյան, Լիակ. քերական, հ. 2, էջ 283:

² Մ. Արքայան, Արդի հայերենի գերանունները, Երևան, 1956, էջ 173, ծանոթ.

³ Տե՛ս Մ. Պ. Մինասյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1954, էջ 289:

⁴ Ինքն գերանունը հաճախ կարող է գործածվել առաջին և երկրորդ դ. անձն. գերանունների հետ՝ սաստկական նշանակությամբ: Թեև «ինքն», երրորդ դեմքի է, սակայն կարող է այլ դեմքի իմաստով կիրառություն ունենալ (Տե՛ս Մ. Պ. Արքայան, Իրարարի ձևաբան, 1958, էջ 86):

2. Եւ արդար նախանձուն իւրոյ զուր հարիրսն ինքեան ձեռք սատակեաց (Եղիշէ, էջ 108.8)՝ Եվ իր արդար նախանձախնդրությամբ (ներանցից) սխալարար իւր իսկ ձեռքով սպանեց, Պրոֆ. Ե. Տեր-Մինասյանը թարգմանել է «իր ձեռքով» պարզապէս (էջ 182)։

Մատենադարանի N X: 4809 (1003), 1310 թ. և 1886 (1683). ԺԴ դար? ձեռագրերը այս նախադասության մէջ ինքեան բառի փոխարեն ունեն իւր ստացական գերանվան գործիականը՝ իւրով, բանի որ հատկացյալը (ձեռքն) գործիական հոլովով է դրված։ Սա ևս կարող է ապացույց ծառայել մեր ասածին։ 3. ...Ձի գիտացել խոյս տալ ի շարէն, և զբարին ընտրել իւրոց կամացն լաւութեամբ, իբրև յինքեան քաջութենէ (Աղաթ., 1909, էջ 138.7)՝ ...Որպեսզի կարողանա շարից փախչել և բարին ընտրել իր ազատ կամքով, իբրև իր իսկ առաքինությամբ, Եւստիոս հատկացուցիչն իր վրա է ընդունել հատկացյալի ի (յ) նախդիրը։

Ինքեան սեռականը շեշտում է, սաստկացնում իր փոխարինած իւր ստացական գերանվան իմաստը, ինչպէս առհասարակ ինքն անձնական գերանունը հալածաբանական գործածվելով երեք գեմքերի անձնական գերանունների հետ՝ նրանց հաղորդում է սաստկական նշանակություն։ Ուստի, ինչպէս տրված օրինակների թարգմանությունից երևաց, այն աշխարհաբար թարգմանելիս կարելի է չթափարարվել սոսկ ու գերանվամբ, այլև նրա իմաստը սաստկացնել իսկ եղանակավորող բառով, այսինքն՝ թարգմանել իւր իսկ՝ Իհարկե, սա պարտադիր թարգմանական կանոն չէ։

Գրաբարի XIX դարի քերականների կողմից ճիշտ չեն գնահատվել ստացական գերանուններն իբրև խոսքի մաս ու նրանց կիրառական նշանակությունը կամ պաշտոնը նախադասության մէջ։ Ըստ այնմ էլ գրաբարի ստացական գերանունները մերթ կոչվել են «ստացական գերանուն», մերթ՝ «ստացական ածական»։

Հայտնի է, որ գրաբարի ստացական գերանունները կարող են հանդես գալ գոյականի հետ, որպէս նրա հատկացուցիչը։ Օր.

1. Եւ առաքեաց այր առաջի երեսաց իւրոց (Թագ. 4-րդ, 2, 32)։

2. Զայս պատուէր առի ի հօրէ իմմ (Յովհ., Ժ, 18)։

Ահա այսպիսի ստացական գերանունը այդ քերականների կողմից կոչվում է «ստացական ածական» կամ «ածականաբար կիրառված ստացական գերանուն»։

Ստացական գերանունները կարող են և գործածվել առանձին, որպէս հատկացուցիչներ, Դրոնց հատկացյալները զեղչվել են (աշխարհաբարում՝ փոխանուն սեռական գերանուն)։ Օր.

1. Ժանաչեմ զիմսն և ճանաչիմ յիմոցն (Յովհ., Ժ, 14)։

2. Եւ իւրէն իսկ անդէն դէս ևս իբրև զքաղղեացիսն այրեցեալ լինէին (Եղիշէ, 1957, I, էջ 13. 18)։

Այսպիսի ստացական գերանունը կոչվել է «ստացական գերանուն»։ Նման ոչ գիտական մոտեցումն ընդհանուր է գրաբարի XIX դարի քերականներին։ Սակայն, ինչպէս կտեսնենք, ոմանք ստացական գերանուններն ուղղակի անվանում են «ստացական ածական», այդպիսով գերանունը միացնելով մի այլ խոսքի մասին՝ ածականին։

Միք. Չամչյանցն իր Քերականության մէջ միշտ պահպանում է «ստացական գերանուն» տերմինը։ Սակայն նա և ուրիշներ այն միտքն են հայտնում, թէ «գիտելի է զի բազում անգամ ի տեղի ստացականաց ղենմբ զսեռականսն կական գերանունաց իբր յատկացուցիչ» (էջ 380, 1826 թ. հրատ.)։ Այսինքն՝ իրենց հարակից գոյականի հոլովին և թվին անհամաձայն մնացած անձնական գերանունների սեռական հոլովաձևերը ոչ ստացական գերանուններ են, ոչ էլ «ստացական ածականներ», այլ պարզապէս անձնական գերանվան սեռական հոլովը։ Այս բացատրությունը ճիշտ չէ իհարկե։ Այս կարծիքը պաշտպանել են նաև Ա. Բագրատունին և Գ. Ավետիսյանը։ Նրանց բերած օրինակներից պարզ երևում է, որ խոսքն այստեղ իր հատկացյալին անհամաձայն մնացած հատկացուցիչ-ստացական գերանվան մասին է։ Ահա նրանց օրինակներից. «Թող զոխս սրտի քո, Թոշակօքն ձեր բաւականասցիք (Շնորհալի, Ընդհանր. 1)»։ Քո և ձեր՝ անձնական (սեռական) գերանունների սեռական հոլովաձևերը, որպէս նախադասության անդամ, հատկացուցիչ են, իսկ որպէս խոսքի մաս՝ ստացական գերանուն՝ ծագած դու անձնական գերանվան եզակի և հոգնակի սեռականից։ Անձնական գերանվամբ արտահայտված այն հատկացուցիչը, որ համաձայնել է իր հատկացյալին կամ անձնական գերանվան սեռական հոլովով է մնացել, հենց ինքը ստացական գերանուն է գրաբարում։

¹ Ա. Բագրատունի, Հայ. քերակ., էջ 363, № 836։ Գ. Ավետիսյան, էջ 432, № 1042։

Գ. Ավետիքյանը ևս ստացական գերանուններով միշտ անվանում է «ստացական գերանուն», նշելով, որ դրանք կարող են գոյականաբար և ածականաբար հանդես գալ:

Ա. Բաղրատունին գրաբարի գերանունները բաժանում է երկու խմբի՝ «գոյական կամ էական» և «ածական»: Ստացական գերանունները մտնում են այս երկրորդ խմբի մեջ. քերականորդրանք անվանում է «ածական գերանուն», կամ լավ ևս ասել՝ գերանվանական ածա. կանք»¹:

Ա. Այտրեյանը, Մ. Գաբազանյանը, Ստ. Մալխասյանը նույնպես այն կարծիքին են, որ իմ, քո, մեր, ձեր, իւր ստացական գերանուններն են: Գերանուն են այն ժամանակ, երբ մենակ, իբրև փոխանուն են գործածվում, իսկ ածական են, երբ գոյականի հետ են հանդես գալիս: Ա. Այտրեյանը գրում է. «Իմ, քո, մեր, ձեր, իւր ստացական գերանուններն ածական են»²:

Մ. Արեղյանը ավելի առաջ տանելով ստացական գերանունների վերաբերյալ այս ոչ ճիշտ տեսակետը՝ իմ, քո, մեր, ձեր, իւր ստացական գերանունները պարզապես անվանեց «ստացական ածականներ»³ (այնպես, ինչպես դրանք կոչվում են ֆրանսերեն լեզվի քերականության մեջ՝ adjectifs possessifs). «...իմ, քո, մեր, ձեր, իւր ստացական ածական են»⁴: Պրոֆ. Մ. Արեղյանը իր տարրեր աշխատություններում գերանունների նկատմամբ տարբեր մոտեցում է ցուցաբերել, գրում է րենկ. մ. Աբրահամյանը⁵: Եվ իրոք, իր «Լեզվաբանության հոլովները» աշխատության մեջ (Վաղարշապատ, 1908) նա նույն «ստացական ածականները» կոչում է «ստացական գերանուն»: Եվ սա ճիշտ է գրաբարի համար:

Սոբոլ, դորա, նոցա և նմանները քերականորդ անվանել է «ցուցական սեռականներ»⁶, բայց թե դրանք ինչ խոսքի մաս են՝ մնում է ենթադրել:

Հ. Աճառյանը կարծեր ուրույն մոտեցում է ցուցաբերում գրաբարի ստացական գերանունների անվանակոչման նկատմամբ: Ես իր «Լեզվաբանության քերականության» երկրորդ հատորի «Ստացական գերանուն» վերնագրված գլխում գրում է. «Գրաբարի մեջ ստացական գերանուններն են իմ, քո, մեր, ձեր, իւր» (էջ 283): Բայց թիչ ներքևում նա ավելացնում է. «Ստացականները կարող են գործածվել թե՛ իբրև ածական և թե՛ իբրև գերանուն: Ածական լինելու դեպքում դրվում են գոյականից կամ առաջ, կամ հետո և երկու դեպքում էլ համաձայնում են նրան» (էջ 285): «Քո ստացականի կարճ հոլովածը սովորաբար ածական է... երկար հոլովածը սովորաբար գերանուն է» (էջ 286): Այսպիսով տեսնում ենք, որ մեծանուն գիտնականի հայեցակետը չի տարբերվում իր նախորդների, մասամբ և Մ. Արեղյանի տեսակետից, որովհետև վերջինս էլ գրաբարի իմ, քո, մեր, ձեր, իւր ստացական գերանունները «ստացական ածական» անվանելով՝ ավելացնում է, որ «կարող են և իբրև գոյական գործածվել անհոլով կամ ա. դ. և հոգեբով»⁷, այսինքն՝ այն դեպքում, երբ ըստ Հ. Աճառյանի, այդ բառերը ստացական դերանուն են: Իսկ «Գրաբարի ուսուցիչ» իր փորձիկ աշխատության մեջ այս հարցում Հ. Աճառյանը լիովին համաձայն է Մ. Արեղյանին: Նա գրում է., «Ստացական ածականները հետևյալներն են՝ իմ, քո, մեր, ձեր»⁸, առանց հիշատակելու, որ սրանք կարող են և իբրև գերանուն գործածվել:

Եթե մեր քերականագիտության անցած ժամանակաշրջանում գրաբարի ստացական գերանունները գանազան անուններով են կոչվել՝ ստացական գերանուն, ստացական ածական, գերանվանական ածական կամ ածական գերանուններ, նայած թե նրանք առանձին են գործածվել, թե գոյականի հետ, ապա հայագիտության սովետական շրջանում գրաբարի մեր մասնագետները⁹:

¹ Ա. Բաղրատունի, նշվ. աշխ., էջ 92:

² Հ. Վերթյանի «Լեզվաբանության» վերականգնված հայկադրական լեզուի, աշխատասիրեալի. հ. Ա. Վ. Այտրեյան, էջ 49:

³ Մ. Արեղյան, Գրաբարի համառոտ քերականություն, Վաղարշապատ, 1907, էջ 92, նույնպես այս աշխատության 1936 թ. ներանում լույս տեսած վերամշակված հրատարակության մեջ: Գոյականից անկախ գործածված ստացական գերանունները նա անվանեց «գոյականաբար գործածված ածական»:

⁴ Նույն տեղում, էջ 158-159:

⁵ Մ. Գ. Աբրահամյան, Սովորական գերանունների գերանունները, Երևան, 1956, էջ 76:

⁶ Մ. Արեղյան, Գրաբարի համառոտ քերականություն, էջ 93:

⁷ Նույն տեղում, էջ 92:

⁸ Հ. Աճառյան, Գրաբարի ուսուցիչ, Երևան, 1954, էջ 33:

⁹ Տե՛ս Վ. Առաքելյան, Գրաբարի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1945: Մ. Վաղարշյան, Գրաբարի դասագիրք, Երևան, 1951: Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձևաբանություն, Երևան, 1952 և 1958՝ երկրորդ բարեփոխված հրատարակություն:

Վ. Առարկյանը, Ա. Ա. Արրահամյանը, Ս. Ղազարյանը և ուրիշներ գերանուններն առհասարակ բնորոշելու ճիշտ, դիտական տեսակետի վրա կանգնած լինելով՝ գրաբարի ստացական գերանուններն անվանում են ստացական դերանուն՝ անկախ նրանց գործածությունից նախադասության մեջ:

Հին բերականների կողմից ստացական գերանուն համարված սեռականներն ու մինչև այսօր թվարկված ստացական գերանուններն իրենց կազմությամբ պարզ են: Գրաբարում կան նաև հենց այդ պարզ ստացական գերանուններից -ին վերջածանցով կազմված ածանցյալ ստացական գերանունների ձևեր: Այդ ընդունում են մեր բոլոր բերականները: Սակայն «ածանցական» տերմինի և ածանցյալ ստացական գերանունների կազմի հարցերում ումանց միջև կա տարակարծություն:

Այսպես, Գ. Ավետիքյանը ընդհանրապես գերանունների մասին խոսելիս՝ գտնում է, որ դրանց մի մասը «նախատիպ» է. դրանք են «էականները» (անձնական գերանունները) և ցուցականները. իսկ մյուս մասը «հատուկ ածանցյալ» է. դրանք են «ստացականները» իմ, քո, մեր, ձեր, սորա և այլն», որովհետև ուրիշ գերանուն կր ձևանան: Հին բերականն ալ զանոնց հատուկ ածանցյալ կը դնէ, զերէն (որովհետև—Մ. Մ.) առանց օտար մասնիկի բուն գերանուն կը կրէ, և գերանուն կը մնան»¹: Իսկ Միր. Չամչանցը «Յաղագս պարագայից գերանունաց վերնադրի տակ գրում է. «Տեսակը գերանունաց են երկու, որպես և անունացն, այսինքն նախատիպը և ածանցականը: Նախատիպը են սորին. իմ, քո, մեր, ձեր, նոյն, իւր, ինքն և ևս սորա, դորա, նորա և այլն»:

Իսկ ածանցականը են նոյն նախատիպ գերանուններ վերադարձը յայլ իմն եղանակ նշանակելով՝ ի ձեռն աննշան մասնկացս. ային, ին...»²:

Միր. Չամչանցի տեսակետին կողմնակից են բերականները մեծամասնությամբ: «Ածանցական» կամ «ածանցյալ» տերմինի տակ մենք ևս հասկանում ենք -ին մասնիկի կցումով պարզ ստացական գերանուններից կազմված ձևերը:

Թեև մեր բոլոր բերականներն ընդունում են ածանցական ստացական գերանունների դասությունը գրաբարում, սակայն բոլորի մոտ դրանց կազմը նույնը չէ:

—Ին վերջածանցի միջոցով պարզ ստացական գերանուններից ածանցյալների կազմության ժամանակի -ին ածանցը կցվում է պարզ ստացական գերանունների թե՛ ուղիղ, թե՛ սեռականի հոլովածին: Ածանցական ստացական գերանունների կազմը կախում ունի այն բանից, թե -րի վերջածանցի միջոցով ածանցյալներ կազմվում էն արդյոք բոլոր պարզ ստացական գերանուններից ու հին բերականների կողմից իբրև այդպիսի դիտված սեռական հոլովածներից, թե սոսկ դրանց մի մասից:

Նախ պարզերի ուղղականից առաջացած ածանցյալ ստացական գերանունների մասին:

Միր. Չամչանցը գտնում է, որ -ին ածանցով ստացական գերանուններ կազմվում են իր և մյուս հին բերականների ստացական գերանուն համարած բոլոր բառերից՝ իմ-իմային, քո-քոյային, իւր-իւրային, մեր-մերային, ձեր-ձերային, իւրեանց-իւրեանցային, սորա-սորային... նոցա-նոցային և այլն³: Գ. Ավետիքյանը (Քերական, էջ 50, ծանոթ. 3) իր ժամանակին գրում էր, որ ոչ այս բոլոր բառաձևերը գոյություն ունեն գրաբարում. մենք կարող ենք ավելացնել, որ Միր. Չամչանցը կա՛մ դրանց հանդիպել է ուշ շրջանի գրաբարով գրված երկերում, կա՛մ հանդիպելով դրանցից իրոր գործածականներին՝ մյուսները ենթադրել է: Գործածական են մեծ մասամբ իւր, մեր, ձեր ստացական գերանուններից ածանցվածները⁴: Ս. Մախասյանցը ավելացնում է նաև իմային:

Ա. Բազրատունին ընդունում է միայն իմային, մերային, ձերային, իւրային, իւրեանցային ձևերը:

Վ. Չալրիսյանն ու Հ. Աճառյանը չեն հղ հիշատակում (-ային) վերջահանգ ածանցյալ ստացական գերանունները:

¹ Գ. Ավետիքյան, Քերականութիւն հայկական, էջ 271:

² Միր. Չամչանց, Քերական հայկ. լեզուի, էջ 200—201:

³ Նույն տեղում, էջ 50:

⁴ Տե՛ս Ա. Ա. Արրահամյան, Գրաբարի ձեռնարկ, 1958, էջ 95: ՆԱԲ-ի վկայություններում գտնում ենք նորային. «Նորայնովըն կամօք էքս զհաստատութիւն ունիք», «Ոչ հազորդ լինելով իւրե նորայնովըն ընդթեան» (նորայն բառի տակ):

Մենք ասացինք, որ այս ածանցական ձևերը պարզ ստացական ղերանունների ուղղականից կազմվում են (-ին) մասնիկի կցումով: Սակայն ինչպես տեսնում ենք, պարզ ստացականների ուղղականից հետո հանդես է գալիս (-ային) վերջածանցը, որ կարելի է տարրալուծել այսպես. ա-յ-ին: Այստեղ բուն վերջածանցը: -ին մասնիկն է, և ձայնավորը նրա և ստացական ղերանվան միջև հոդակապ է, իսկ չ կիսաձայնը -ին վերջածանցի և և հոդակապի միջև ձայնակապ է:

Ածանցյալ ստացական ղերանուններ առաջանում են նաև պարզերի եզակի սեռական հոլովաձևերից -ին վերջածանցի կցումով: Այս ճանապարհով ածանցյալ ստացական ղերանուններ կարող են ծագել իհարկե այն պարզ ստացական ղերանուններից, որոնք հոլովվում են, և իհարկե որ բոլոր բերականների համաձայնությամբ դրանք իմ, քո, իւր, մեր, ձեր բառերն են, ուստի զբաղաբի բոլոր բերականների մոտ այս տեսակի ստացական ղերանունների կազմը էություն է՝ իմ-իմոյ-իմոյին, քո-քոյ-քոյին, իւր-իւրոյ-իւրոյին, մեր-մերոյ-մերոյին, ձեր-ձերոյ-ձերոյին: Ինչպես նկատելի է, -ին ածանցը ազդեցություն է քո ստացական ղերանվան կարծ կամ քո հիմքով հոլովված ձևին: Այստեղից սովորեցնում է, որ վերջիններից միայն քոյին ձևն է գործածական, իսկ չ. Աճառյանը ազդեցնում է, որ «մերոյայն շրջանում գործածություն ունի միայն քոյին»-ը (կիսկատար քերական, հ. II, էջ 289):

Մեր հին բերականները որպես ածանցյալ ստացական ղերանուններ նշում են նաև -ին վերջածանցով որոշ ստացական ղերանունների եզակի գործիական հոլովաձևից առաջացած ածանցյալ ձևեր.

իմ-իմոյ-իմոյին, քո-քոյ-քոյին.

մեր-մերոյ-մերոյին, ձեր-ձերոյ-ձերոյին, իւր-իւրոյ-իւրոյին կամ իւրովի:

Սա. Մալխասյանցն այս ձևերը համարում է մակբայ. Ա. Այստեղյանը անվանում է «տեսակ մեր ստացական գործիական»¹, բրոնց հետ հիշատակում է նաև իմովսան, իւրեանցան, իսկ Գ. Ավետիսյանը՝ իմովսան, իւրեանցան (էջ 231):

Այսպիսով, բոլոր իրենց կազմության, գրաբարի ստացական ղերանունները լինում են պարզ և ածանցյալ: Պարզ են իմ, քո, իւր, մեր, ձեր բուն ստացական ղերանունները: Ածանցյալ են՝ մերոյին, ձերոյին, իւրոյին, իմոյին, քոյին, իւրոյին, մերոյին, ձերոյին և այլն:

(-ային) վերջավորով ածանցյալ ստացական ղերանունները հոլովվում են Ս պարզ հոլովմամբ, իսկ (-ոյին) վերջածանց ձևերը չեն հոլովվում, այնուամենայնիվ մնում են ստացական ղերանուններ:

Ածանցական ստացական ղերանունները, առավել ևս պարզ ստացականների սեռականի ձևերից կազմվածները, բացառությամբ քոյին ձևի, դասական գրաբարում չունեն տարածված գործածություն:

Տեսանք, որ գրաբարի հին և նոր բերականներն անխտիր ընդունում են իրենց կազմությամբ պարզ բուն ստացական ղերանունների առաջացումը անձնական ղերանունների եզակի և հոլովակի սեռականի հոլովաձևերից, որոնք իբրև ուղղական հոլով զիտվելով՝ դարձյալ են հոլովվում: Ընդ. Ա. Ա. Արաքսյանը գրում է. «Ինչպես առաջին իսկ հայացքից կարելի է նկատել, սրանք ծագում են անձնական ղերանուններից»²:

Միանգամայն բնական է, որ գրաբարի ստացական ղերանուններ իրենց ուղիղ կամ ուղղակիան, չթերված ձևով անձնական ղերանունների սեռական հոլովաձևերը լինեն: Նույնիսկ նրանց ստացական անունը ուղղակի կապ ունի սեռական հոլովի անվան հետ. մեր առաջին բերականներից և միամասնակ Գ. Թրակացու Քերականության մեկնիչներից Ստեփանոս Սյունեցին սեռական հոլովի անունը բացատրում է «ստացական» բառով. «Եւ հոլովը ղերանունն նախագաղափարացն. ուղղական ևս, դու սա, դա, նա, սեռական, որ է ստացական»³...» (ընդգծումն իմն է -Մ. Մ.):

¹ Վ. Շալբոյան, Ա. Այստեղյան, Քերականություն հայկական լեզուի, էջ 199: Բանն այն է, որ այս հոլովովոգ բառաձևերը կարող են կիրառվել թե՛ որպես ստացական ղերանուն (երբ գոյական անվան են վերաբերում), թե՛ իբրև մակբայ: Որպես մակբայ՝ «Բայց այլք ասեն՝ եթէ ի ձիթենւոյն, որ յԱթէնս բուսաւ. իւրովի (Եղն. III, Ե, էջ 144). ստացական»՝ «Զի մի կարծիքս եթէ Երուսաղէմ իւրովին ամբողջեամբ կարաց պարել» (Թ. Թոռնյան, Հատընտիր ընթերցութեք, էջ 286):

² Ա. Ա. Արաքսյան, Գրաբարի ձևաբանություն, էջ 94:

³ Ն. Աղոնց, Արուեստ Գիտնական քերականի և հայ մեկնություններ, էջ 216:

Ստացական գերանունները իրենց պաշտոնով միշտ հատկացուցիչ են նախադասություն մեջ: Այդ, զրաբարում հատկացուցիչը հիմնականում գրվում է սեռական հոլովով (ժամանակավորապես անուններ փոքրաթիվ բացառությամբ): Եթե սեռական հոլովով է գրվում գոյական անվամբ արտահայտված հատկացուցիչը, ապա նույնը պետք է արվի նաև այն դեպքում, երբ գոյականը որևէ ձևով ցույց է տրվել ես, դու, մեր և այլն անձնական գերանուններով: Ասվում է՝ Տուն Թորգոմայ, որդի մարդոյ և այլն, Թորգոմ և մարդ գոյական-հատկացուցիչները գնելով սեռական: Եթե անձնական գերանունները սեռական հոլովի համար չունենալին չարահայտիկ ձև, այսինքն՝ Ենթարկվելին անվանական հոլովման, ապա վերահիշյալ օրինակներում գոյականով արտահայտված հատկացուցիչները անձնական գերանուններով փոխարինելիս՝ կառնենք տուն ես-ի, որդի դու-ի, որդի մեր-ի և այլն (գուցե այլ հոլովիչով, մենք պատահաբար ենթադրեցինք ի):

Անձնական գերանունների սեռական հոլովը, ուստի և «ստացական գերանուններ» հենց այս ձևով էլ կազմված դառնում ենք թուրքերեն լեզվում՝ որտեղ ben (ես), sen (դու), biz (մենք), siz (դուք), onlar (նրա) անձնական գերանունները գուրկ լինելով յուրաքանչյուր գերանվանական հոլովումից, հոլովվում են անվանական որոշակի հոլովումների նմուշով²: Ակնառությամբ համար համարները որոշ անձնական գերանունների և համապատասխան անվանական հոլովման մի գոյականի եզակի թվի սեռական հոլովաձևերը:

Անձնական գերանուններ	գոյական անուն
ուրդ. ben (ես) sen (դու) biz (մենք) siz (դուք)	ten (մարմին)
սեռ. benim (իմ) senin (քոյ) bizim (մեր) sizin (ձեր)	tenin (մարմնոյ)

Ինչպես նկատելի է, անձնական գերանունների սեռական հոլովի վերջավորությունը նույնն է, ինչ գոյականինը՝ -in: Ուստի թուրքերենում անձնական գերանունը չունի սեռականի առանձին ձև, ինչպիսին ունի զրաբարյան կամ ընդհանրապես հայերենը՝ Իմվարություն կամ առարկություն չպետք է հարուցի benim, bizim անձնական գերանունների (սեռական հոլովի) -im վերջավորությունը՝ մյուս անձնական գերանունների և գոյական անվան ընդհանուր -in վերջավորության փոխարեն: Փոխադրեցական հնչյունափոխության մի ձև հանդիսացող առնամանություն երևույթի համաձայն, -in վերջավորության ո առաջնալեզվային հնչյունը ben և biz բառերի սկզբնական b հնչյունի ազդեցությամբ վերածվել է երկչորնային m-ի (ասաջրնիթաց թերի առնամանում), որի հետևանքով նախկին *benin ձևը դարձել է benim, *bizin-ը՝ bizim:

Այս տպակն է թուրքերենի համար Բայց քանի որ զրաբարում անձնական գերանունները սեռական հոլովի համար (ոչ միայն սեռական) ունեն ուրույն ձև՝ գերանվան արմատի փոփոխմամբ, ուստի զրաբարում անթույլատրելի է ասել տուն ես-ի, որդի դու-ի և այլն: Ասվում է նույն իմաստով, բայց տարբեր արտահայտությամբ՝ տուն իմ, որդի քո, այդի մեր և այլն, որոնք իմաստով նույնն են, ինչ՝ թրք. benim evim, senin, oglun, bizim bahce և այլն:

Զրաբարում ուղղական և հայցական հոլովներում միայն, որտեղ գոյականին հարակից ստացական գերանունը մնում է անփոփոխ, գեղե աղնառու է, որ ստացական գերանունները ծագում են անձնական գերանունների սեռական հոլովից:

Սակայն քանի որ զրաբարում ստացական գերանունները մի անգամ ծագած լինելով անձնական գերանունների սեռական հոլովաձևերից՝ իբրև ինքնուրույն բառեր, գոյականի հետ գործածվելիս դարձյալ ենթարկվում են հոլովման և ստացականություն կամ պատկանելություն են ցույց տալիս և նախադասության մեջ հատկացուցիչ են ո՛չ միայն իրենց ուղիղ, կամ անձնական գերանվան սեռական հոլովի ձևով, այլ նաև իրենց թեք հոլովաձևերում, ապա գրանք իրավամբ կազմում են գերանունների առանձին տեսակ՝ ստացական գերանուններ:

Եթե գրանք չլիալիս որպես առանձին գերանուններ և շտապվել արդեն նրանց մեջ տեղա ուսացականության իմաստը, ապա հազիվ թե ասվեր «Ձայն Լզբորբորոյ իմոյ»: Եթե վերլուծենք իմոյ հատկացուցիչը, ապա կարելի է տեսնել, որ նրանում կրկնակի է արտահայտու-

¹ Թուրքերենում, ինչպես և արդի հայերենում, անձնական գերանունների սեռականը իբրև հատկացուցիչ գործածվելիս մնում է անփոփոխ, ուստի նրանում ես չկան ստացական գերանուններ իբրև առանձին խումբ:

² Տե՛ս Հ. Աճառյան, Լիակ. քերական, հ. 2, էջ 49:

ված պատկանելության իմաստը նախ որպես ևս անձնական ղերանվան սեռական հոլովի, որով «երրորդորդույ» հատկացյալը պատկանում կամ հատկացվում է մի անձի կամ առարկայի, որ ցույց ենք տալիս կամ որին ակնարկում ենք ևս անձնական ղերանվան սեռական հոլովով՝ իմ բառով: Հետագայում կարծես մոռացվել է իմ բառի այս հատկությունը, և հատկացյալի հատկացումը կամ պատկանելությունը ևս անձնական ղերանվամբ նշված անձին կրկին է արտահայտվել, սակայն ոչ թե ևս անձնական ղերանվան, այլ իմ ստացական ղերանվան սեռական հոլովով՝ իմոյ հոլովածեով: Դարեր շարունակ այդ նպատակին ծառայելու հետևանքով, անձնական ղերանունների սեռական հոլովածերը անջատվել կազմել են ղերանունների ուրույն խումբ՝ ստացական ղերանուններ, որոնք պատկանելություն են ցույց տալիս: Եթե դրան ավելացնենք նաև այն, որ իմ, քո, մեր, ձեր, իւր բառերի մեջ արդեն բնապես առկա է տարբեր գեմքերի պատկանելությունը ցույց տալու գործությունը, ապա լրիվ հասկանալի կդառնա, թե ինչու ստացական ղերանունները նախադասության մեջ հատկացուցիչ են ոչ միայն իրենց սեռական հոլովում (իմոյ և այլն), որ հատկացուցչի հոլովն է, այլ իրենց մյուս թեր հոլովներում ևս, այսինքն՝ իրենց հատկացյալին հոլովով ու թվով համաձայնելիս էլ դրանք մնում են հատկացուցիչ: Որինակ.

1. Ոչ էլ իմ ժուժկալութիւն տողալոյդ՝ իմով գործութեամբ (Ագաթ. 1909, էջ 66. 14):

2. Տուր զդուստր քո որդւոյ իմում կնութեան (Թադ. IV, ԺԳ, 9): Չնայած իմով և իմում բառերը սեռական հոլովով չեն, բայց նախադասության մեջ հատկացուցիչ են: Գոյականները գուրկ են այս հատկությունից: Հենց որ նրանք շեղվեն սեռական հոլովից կամ դրվեն այլ թեր հոլովով, դադարում են հատկացուցիչ լինելուց նախադասության մեջ: Ծիշո է, պատահում է, որ գոյականով արտահայտված հատկացուցիչն էլ գրաբարում երբեմն դրված է լինում իր հատկացյալի հոլովով, մանավանդ գործիական և բացառական հոլովներում, չդադարելով հատկացուցիչ լինելուց: Որինակ.

1. Ընկալցոր խնդութեամբ սրտիւ (Եղիշե, էջ 102. 1), փոխանակ՝ սրտի:

2. Նուսպեալ էր չորն յերեսաց երկրէ (Ծննդ. Ը, 13), փոխանակ՝ երկրի:

Սակայն այս կատարվում է գուտ ոճական որոշ նկատառումով. չնայած հատկացյալի աղ-ղեցությամբ հատկացուցիչն էլ դրվում է նույն հոլովով, ինչ հատկացյալը, այնուամենայնիվ մատենագրի մտածության մեջ այդ բառը մնում է իրի հատկացուցիչ նախադասության անգամների շարքում: Այդ երևույթը կարծես նախադասության անգամների մի տեսակ շարահյուսական փոխադրություն է, առնմանության յուրատեսակ երևույթ: Վերջապես ի՞նչ էլ լինի, այն, ինչ բացառություն է գոյականով արտահայտված հատկացուցչի համար, կական և կանոն է ստացական ղերանունների համար, որոնք ի՞նչ հոլովով էլ դրված լինեն՝ համաձայն իրենց հատկացյալի հոլովին, են և մնում են հատկացուցիչ:

ПРИТЯЖАТЕЛЬНЫЕ МЕСТОИМЕНЕНИЯ АРМЯНСКОГО ЯЗЫКА

М. П. МИНАСЯН

(Р е з ю м е)

Исхожно притяжательными местоимениями древнеармянского языка были местоимения *իմ* (мой), *քո* (твой), *իւր* (свой), *մեր* (наш), *ձեր* (ваш). По своему происхождению это формы родительного падежа личных местоимений *ես* (я), *դու* (ты), *նա* (он), *մեր* (мы), *դուք* (вы), которые выступают как изначальные формы и, в отличие от личных местоимений, склоняются по именному склонению со склонителем *«ն»*.

В редких случаях в качестве притяжательных местоимений употребляются такие формы родительного падежа местоимений *սա*, *դա*, *նա*, *որա* (этого), *որա* (того), *նորա* (того), *սոցա* (эти), *դոցա* (те), *նոցա* (те), которые в этом случае согласуются с определяемым существительным в числе и падеже.

По своему составу притяжательные местоимения древнеармянского языка бывают простыми (*իմ*, *քո*, *իւր*, *մեր*, *ձեր*) и производными (*իմոյին*, *քոյին*, *մերային*), которые образуются из простых притяжательных местоимений с прибавлением суффикса (*-ին*).

Притяжательные местоимения употребляются и с именем существительным, как его определение, и, независимо от него, как родительное субстантивное. В первом случае они у грамматистов XIX века назывались „притяжательным прилагательным“, или „местоименным прилагательным“.

Таким образом, притяжательное местоимение, как часть речи, отождествлялось с прилагательным.

Притяжательным местоимением называлось самостоятельно или независимо употребленное притяжательное местоимение.

В обоих случаях необходимо сохранить термин притяжательное местоимение.

Вопросы происхождения притяжательных местоимений гробара, их состав, способы образования, вопросы их наименования в статье рассмотрены в историческом аспекте, начиная от грамматики Дионисия Фракийского и до наших дней.